ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» ժողովածուով Հայկական ՍՍՌ ԳԱ Արևելագիտության սեկտորը ձեռնարկում է նման աշխատանքների հրատարակության, նպատակ ունենալով ապագայում հրատարակել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմական աղբյուրները Հայաստանի, հայերի և Սովետական Միության մյուս ժողովուրդների մասին և հայկական աղբյուրները Մերձավոր և Միջին Արևելքի երկրների մասին։

Մինչև այժմ հայ պատմագրության մեջ այս ուղղությամբ քիչ բան է արված։

Ա. Սաֆրաստյանի այս ժողովածուն երկար տարիների աշխատանքի արդյունք է, նա առաջին անգամ հայ ընթերցողին ծանոթացնելու է թուրքական աղբյուրների հետ։ Օգտագործված հարուստ փաստական նյութը ցույց է տալիս Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Կովկասում և պատմական Հայաստանում, անդրկովկասյան եղբայրական ժողովուրդների համատեղ, ազատագրական պայքարը թուրք զավթիչների դեմ՝ XVI—XVIII դարերում։

Այս բոլորը թուրք պատմագիրները շարադրել են բավական մանրամասնորեն, սակայն լինելով պետական պաշտոնյաներ, պատմական դեպքերի մեկնաբանումը տվել են հլնելով Թուրքիայի տիրող շրջանների շահերից։

Ժողովածուում զետեղված նյութերի հրապարակումը անհրաժեշտ ու այժմեական է այն պատճառով, որ թուրք ժամանակակից պատմագրությունը կեղծում է պատմական փաստերը, ճգնում է ցույց տալ, որ իբր թե անցյալում սուլթանական Թուրքիայի գերիշխանության տակ ապրող ժողովուրդները իրենց պետականության և կուլտուրայի զարգացման ներկա աստիճանին են հասել

Օսմանյան կառավարության հավանավորության և բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ։

Թուրք պատմագիրներից բավվածարար բերված հատվածները կարևոր են նաև այն իմաստով, որ նրանք ընթերցողին ծանոթացնում են թուրք միջնադարյան պատմագրության հետ, ցույց են տալիս մեր հարևան ժողովրդի բարքերը, ներքին և արտաքին քաղաքականությունը։

Աշխատանքը թուրքական աղբյուրների վրա շարունակվում է։ Մոտակա տարիներում նախատեսվում է լույս ընծայել ժողովածուի 2-րդ և 3-րդ հատորները։

Արևելագիտության սեկտորը շնորհակալությամբ կընդունի այս հատորի վերաբերյալ ընթերցողների դիտողություններն ու առաջարկությունները։